ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 9 ՄԱՐՏ 1863 — ԹԻՒ 696

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ, 9 ՄԱՐՏԻ

Ամերիկայի հիւսիսային նահանգաց դաշնակցութիւնը պաշտօնական կերպիւ պատասխան տուաւ Գաղղիոյ կառավարութեանը 'ի մասին խաղաղասիրական առաջարկութեանը զոր ըրած էր։ Այս պատասխանը բացասական է. այսինքն յիշեալ հասարակապետութեան կառավարութիւնը շնորհակալ ըլլալով Նաբոլէոն կայսեր մարդասիրական առաջարկութեանցը, կըսէ թէ նոյն առաջարկութիւնները անգործադրելի են. վասնզի միաւորութեան վերահաստատութեան հիման վրայօք բանախօսութիւն մի՝ տարակոյս չկայ թէ պիտի չընդունուի հարաւային նահանգաց դաշնակցութենէն. իսկ բաժանման հիման վրայօք բանակցիլը անկարելի է։ Բայց յայտնէ, յիշեալ պատասխանին մէջ գրուած է, թէ Հիւսիսային զօրաբանակը օրըստօրէ դէպ 'ի նպատակն իւր կըյառաջադիմէ և այնպէս պաշարած է իւր թշնամիները, որ վերջապէս պիտի պարտաւորին կամայ ակամայ միաւորութիւնը ընդունիլ։

Իրաց այս ելքը կապացուցանէ՝, թէ Անգղիոյ կառավարութիւնը իրաւունք ունէր չմիաւորուելու Գաղղիոյ հետ՝ այսպիսի առաջարկութիւն մի ընելու համար Վաշինկթընի կառավարութեանը, յառաջ բերելով թէ տակաւին բարեկամօրէն միջամուխ ըլլալու ժամանակը չէ հասած։

Այսու ամենայնիւ չեմք գիտեր թէ մ'ինչ հետևութիւն կրնայ ծագիլ Նաբոլէոն կայսեր խաղաղասիրական առաջարկութիւնը մերժուելէն։ Բայց լրագրութիւնք ոմանք կըսեն, թէ այս բանը կրնայ պատճառ մի տալ Գաղղիոյ տերութեանը առ 'ի ճանաչել և ընդունիլ Հարաւային դաշնակցութեան անկախութիւնը և յայնժամ գործքերը ևս առաւել պիտի շփոթուին։

Հիւսիսային դաշնակցութեան ծերակոյտը զինուորական ծառայութեան վրայօք նոր օրէնք մի հաստատեց, որով իւրաքանչիւր քաղաքացի 20 տարեկանէն մինչև 'ի 45 տարեկան, պարտաւորեալ է 3 տարի ծառայել իւր հայրենեացը։

Յունաստանի մէջ դաղտնի միաբանութիւն մի երևան ելաւ, որուն քաղաքական նպատակն էր Օթոն նախորդ թագաւորին դերդաստանը վերահաստատել Հելլենական թագաւորութեան աթոռոյն վերայ։

Այս բանին մասնակից եղող շատ մարդիկ բռնուեցան և բանտարկուեցան. որոց մէջ զինուորական և քաղաքական երևելի անձինք կան։ Դատաստանական հարցաքննութիւններէն և ուրիշ հետազօտութիւններէն յայտնուեցաւ թէ Պավարիոյ և Աւստրիոյ կառավարութեանց կողմանէ շատ դրամ բաժնուեր է երևելի անձանց, որպէսզի հասարակութիւնը համոզեն և զօրաւոր կուսակցութիւն մի կազմեն 'ի նպաստ վերանորոգութեան պալատական հարստութեանը (dynastie) Յունաստանի աթոռոյն վերայ։ Եւ իրօք այս նպատակաւ կուսակցութիւն մի արդէն հաստատուած է, որ նահանգաց մէջ հրապարակական յայտարարութիւններ ըրաւ իւր դիտաւորութիւնը յառաջ տանելու համար։ Բայց Աթէնքի կառավարութիւնը բաւական զօրքյուղարկեց ամեն տեղ, որպէսզի յիշեալ կուսակցութեան յարուցած և յարուցանելու խռովութիւնները զսպէն։

Ազգային ժողովը՝ տեսնելով թէ թագաւորի մը ընտրութեան երկարիլը վնասակար հետևութիւններ կրծնանի ամեն օր վասն անդորրութեան և ապահովութեան հայրենեաց, արժան համարեցաւ յանձնաժողով մի կազմել, որ հոգ տանի արժանաւոր թագաւոր մի գտնելու Յունաստանի գահին համար։ Այսպիսի անձ մի գտնուելէ ետև, ազգային ժողովոյն կամ ուղղակի ազգին ընտրութեանը և հաւանութեանը առջև պիտի դրուի։

Այս գործը՝ կարծուածէն աւելի դժուարութիւններով լեցուն է. վասնզի նախ՝ Յունաց թագաւոր ըլլալու ո՛ր և է վեհապետական իշխան մի պէտք է որ, ո՛չ միայն Հելլենացւոց հաճելի ըլլայ, այլև երեք պաշտպան տէրութեանց հաւանութեանը հակառակ չըլլայ. և այս երկու հաւանութեանց միաբանութիւնը ամենադժուար է. քանզի Հելլենացիները աշխոյժ, պատերազմասէր և աշխարհակալութեան հակամէտ հարուստ թագաւոր մի կուզեն. իսկ մեծ տէրութիւնները՝ ընդհակառակն, կըպահանջեն որ ընտրուելու թագաւորը խաղաղասէր՝, խոհեմ և ծանրագլուխ ըլլայ։ Բայց յայտմանէ նշանակութեան արժանի է թէ վեհապետական երևելի ու հարուստ իշխան մի դիւրութեամբ և առանց հաստատուն երաշխաւորութեան յանձնառու չըլլար Հելլենացւոյց վերայ թագաւորելու. որոնք քանի մի տարիէ ետև կրնան, ո՛ր և է պատճառի մը համար, արտաքսել իրենց նոր թագաւորը Յունաստանէն, ինչպէս որ արտաքսեցին Օթոն թագաւորը։

Բոլոնիայի մէջ պատահած ապստամբութեան վրայօք հասած լուրերը իրարու հակառակ են։ Ազատասէր լրագրութիւնները՝ իրենց կամաց հաճելի բաները իբրև եղելութիւն կըհրատարակեն. իսկ օրինաւորական թերթերը՝ ընդհակառակն ապստամբաց յառաջադիմութիւնները, եթէ ստոյգ ալ ըլլան, կը ծածկեն։ Իրաց այս վիճակին մէջ, անկողմնասէր լրագրի մը համար դժուար է ստոյգը անստուգէն զատել և ճշմարտութիւնը հրատարակել։

Բէդերզպուրկէն կըգրեն, թէ կայսերական հրովարտակաւ բարձրապատիւ Կոստանդիանոս Մեծ-Դուքսը՝ Բոլոնիայի մէջ գտնուած Լուս զօրաց ընդհանուր հրամանատար անուանեցաւ, և Սամարքովզօրապետը իրեն օգնական պիտի կարգուի եղեր։

Անգղիոյ և Գաղղիոյ լրագրութիւնները՝ ըստ մեծի մասին, 'ի նպաստ Բոլոնիայի ապստամբութեանը կը

ԲԱՆԱՍՊԱՐԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Դիմադրական յայտարարութեանց պարոն Յարութիւնի Թ. Յովհաննեանց միջոցաւ բուռց 681եւ682 Արշալուսոյ օրագրի, ընդդէմ յայտարարեալ տետրակի մերոյ, որ ընդ ինքեաւ պարունակէր զուղիղ անցս անցից եւ զգրաւոր ապացուցութիւնս վաւերական ժողովոյ մերազգեից քաղաքիս (Կալկաթայու) 1861 Դեկտեմբերի 8, ընդդեմ ապօրինաւոր գնացից հոգեւորականաց մերոց Զուղայու եւ տեղւոյս։

(Շարունակութիւն։)(1)

Տէր Մարտիրոս անդրէն առ նա դարձուցեալ զդրամն յիւր անուն և ասացեալ զոստայդիր, պահէ՛ր, ասէ, առ քեզ աւանդ, մինչ զրկեցեմ քեզ ի Զաւուց առնել ինչ. որպէս և զրէ առաքեալ Աւետարանչն և առաքի. ապա և յետ լրացուցանելոյ զամենայն ի միջոցի սակաւ աւուրց, պատեհ ընկալնու իւր որպէս բարեկամ յիշել ընդ Աւագերիցսն թէ ծերութիւն քո և բազմամեայ վաստակք թեմ'ս անաւուղղ լինութեամբ, ընդ որ իմ որդիքն սէր առ քեզ, ստիպեն զիս խորհրդատրել քեզ, զի թողցես զմեզ և մնացես յանդորրու յոլովութեան. մնանաւանդ շնորհիւ Տեառն, կարօտաւոր չես. և թէ առնել բարեհաճիցես, կարես զրել ինձ հրաժարական թղթ, նոյնպէս և մինն առ եկեղեցականն. ես կարեմ կարգաւորել զամենայն վասն քո ասելն։ Ընդ այս ժպտեալ նորա ասէ, չմեռայ ա՛յր Մարտիրոս, մինչ ի հանգստանէ կոչումն ընկալայ. չամաչեցա՞ր զու ընդ խօսդ չափազանց. որով կոր ի զլուխ եղեալ նորա, յետ երկուց աւուրց ելանէ ի Զիչրայ իբր զբօսանք, և այցելութիւն

(1)Տես լրագրոյս 693—694։693 թիւերը։

վճակաւորին տեղւոյն. ուր և խաւար մթութեամբ զրէ առ Աւաղնորդն այսուիկ օրինակաւ։

«Զի նպատակ չմոմթութեան կողմանցս, մանաւանդ քաղաքիս, որչափ երևակաբար համարիի այդր, այնչափ խկումթեամբ տեսանի այժմ, զի թողեալ զբնական ազգատեցութիւնս մերայնոյն, ոխերիմ թշնամի հանդիսացեալ են ամենայն քինօք ընդդէմ աւագերիցսն իւրեանց. զի զոր ինչ ճանապարհաւ և հնարիւք զրաւեաց զսիրտ ամենեցուն յառաջնումն, այժմ միանգամայն ներհակութեամբ, խստանօք և նախանձ ունելով երթայ. և լինելով օրէնք տեղւոյս խիստ, ոչ ոք վստահանայ առ երեսս ընդդիմանալ նմա. զի կարող է ասել, քահանայ եմ, Աւագերիցս, պատկեր Աւաղնորդի, զոր ինչ պարտիմ պարտաւորէ զիս առնել, զայն առնեմ. թէպէտ ըստ օրինաց արժան է առնել ստահակ ժողովրդոյ զայն ամենայն զոր առնէ, բայց եթէ յառաջմանէ այնպէս առնէր, չունէր հասանել աստիճանին փառաց և հարստութեան. բայց այժմ ըստորում անկարօտ է յամենայնէ, մնրակէ զկամս իւր և հաճութիւն իւր թուլադրէ ինքեան. վասն այսորիկ ես զզիր ձեր ոչ ի լոյս ընծայեցի(14), զի կարելի է, անդարմանելի խռովութիւն ինչ յառնել. թէև մին քանի անձանց յայտնեցի զրել ձեզ և հանել զտէր Յովհաննէսն ի պաշտօնէն. քանզի եթէ զուք գրէք, յետոյ ինքեանք ունին անկանիլ ի կոշն քահանայի(15). ուստի

(14)Գրուագիւնն ասի լինել ընդդեմ Աւագերիցուն, առ ի գլորել զնա եւ ինքն յաջորդել ի տեղի։

(15)Զայսմանէ, ըստորում գիտեր զանգուածս ոմանց խռովայուզաց. որք ըստ բնաւորութեանն սովորն էին միշտ վարել ներհակականօք, որպէս զարդիս պարզապէս ամենեցուն հաստատի, որք յերեկ որպէս վկայեալ պատուաւորք ազգի, այսօր ընդդեմ կարծեաց, խառն ընդ սինլիքորս զանազիցին ի խորթողէք ինքեանք արասցին, և կարծեմ առնելոյ են, և զտէր Յովհաննէս խայտառակութեամբ արտաքսելոյ յեկեղեցւոյ. . . . ։ Ես ստիպեալ ի բարեկամութենէ, խորհրդատրեցի նմա հրաժարական մի գրել ինձ . . . . զոր թէպէտ կամք ետ, սակայն տեսանեմ առնելն դժուարանայ. վերջապէս եթէ միապէս ստ, առաջի նորա ունելոյ է զհամարումն, որչափ այդր ունի տէր Միքայէլ. զի ասեն, սա քահանայ է և նա քահանայ է. բայց յետ այսու կարի վատ լինելոյ է և չարաչար անկումն և գլորումն նորա ասեն"։(16)

Այն այս ասնդարամետական գրութիւն, ի Զիչրոյ ոչչիստոր արարեալ առաքէ ի Զուզոյ, և դարձեալ ի Կալկաթա, առ ոտս նորին չոզոբորթի որպէս որդի կեղծաւոր և անհարազատ ընդ հօր, և նորա միամիտ և անտեղեակ զդործոյն թէ սառն թանաւորութեամբ թուանաւորեալ էր զինքն, հաւատալով նմա՝ սկսանի ցուցանել նմա զզոտուզ սիրոյն գերբնականի. զարծաթեայ լանջակիր խաչն փոխարէն յոսկի, պարգևէ նմա զպատուական մանուշակագոյն վերարկու և լոգիկ ի Զուխայէ, արծաթագլուխ քանդակագործ ընտիր գաւազան ընդ այլևայլ արժանաւոր ընծայիւք վասն իւր, տայ բերել մեծագին զառնաւուխտ ի Բնարիսայ, և ի Մասրասայ ազնիւ թաշկինակս վասն ամուսնոյն (որում հարս նորա հանապազ սնուանէր). սոյնպէս և այլ իրք վասն դստերայն (զորոյ, ասէր երախտագէտն, թէ թոռունք քո խորատ գազանային կատաղութեան, ըստ յայտնի յուտանաց եւ գործոց։

(16) Զայսմանէ Աստուած ընդդեմ գրուածոց ջուրանայ հեղինակն իւրով իսկ երկար բանակրճատ խոստովանութեամբ առ հաւատարիմսն ի Կալկաթա, յաւելլով զդժոխայինն ստութիւն թէ գրութիւնն կերպիւ իմիք բռնաբարեալ ի Կալկաթա, եւ ոչ գտեալ յայրմէ։

խօսին և ոմանք կըպնդեն թէ յիշեալ երկու տէրութիւնները իրարու համաձայնած են, բարեկամօրէն միջամուխ ըլլալու համար այս գործոյն 'ի պաշտպանութիւն իրաւանց Բոլոնիացւոց։

Գաղղիոյ Թագաւորը կըկարծէ թէ կայսերազուն Կոստանդիանոս Մեծ–Դուքսը սահմանեալ է Բոլոնիայի ապառնի թագաւորը ըլլալու։

Իտալիոյ մէջ նշանակութեան արժանի երևելի դէպք մի չկայ. կառավարութիւնը ամէն կերպ գործունեայ և խոհեմ միջոցները 'ի գործ կըդնէ թերակղզւոյն ընդհանուր բարեկարգութիւնը և ապահովութիւնը հաստատելու համար։ Այս միջոցները և կարգադրութիւնները ապարդիւն չեն մնար. քանզի հարաւային նահանգաց մէջ աւազակութիւնը օր ըստ օրէ զսպուելու և նուազելու վերայ է, ու Սիկիլիայի մէջ անդորրութիւնը կատարելապէս հաստատուած է։

Կըսուի թէ կարդինալ Անդոնէլլին իւր հրաժարականը տուած է արտաքին գործոց պաշտօնէն, բայց սրբազան Պապը չուզեր է ընդունել անոր հրաժարելը։

Արշալոյս 692 թուոյն մէջ, Իզմիրի Անգլիոյ հիւպատոսարանին առաջին թարգման մեծապատիւ մօսիւ Մալուֆին Թուրքերէնէ 'ի գաղղիերէն նորատիպ բառարանին ծանուցումը հրատարակելով զուցեցինք թէ անոր սկիզբը յառաջաբանութիւն մի գրուած է, գրեալ 'ի մօսիւ Ա. Իւպիսինի գրագէտէն։

Հաւատիկ այս յառաջաբանութեան թարգմանութիւնը։

"Մօսիւ Մալուֆին գաղղիերէնէ 'ի Թուրքերէն բառգիրքը՝ ութ տարի յառաջ, ներկայացնելով հասարակութեան, մեր բաղձանքը կըյայտնէինք տեսնելու որ յիշեալ գիտնական հեղինակը կատարելագործէ իւր օգտակար աշխատասիրութիւնը՝ հրատարակութեամբ Թուրքերէնէ 'ի գաղղիերէն բառգիրքին։ Այս բաղձանքը, զոր մեզմէ ետև ուրիշ շատերը կրկնեցին, վերջապէս 'ի գործ դրուեցաւ. և արևելեան լեզուաց ուսման մէջ եղած այս պակասութիւնը, բարեբաղդաբար, լեցուեցաւ շնորհիւ անխոնջ ջանից մօսիւ Մալուֆին։

Ու եթէ ակնկալութիւնը աշխիարհաց և անծանօթ բարեկամաց որոնք ամէն կողմէն կըթախանձէին ըզյիշեալ հեղինակը, աւելի կանուխ 'ի գործ չդրուեցաւ, տրաւունք ընելու պատճառ մը չունիմք։ Վասնզի այնինչ վերջին անգամ աչքէ կանցնէր իւր բառգիրքը, անդադար սրբագրելով զայն և անդադար բառեր յաւելցնելով անոր վրայ որպէսզի աւելի արժանաւոր ընէ իւր գործը բանիբուն հասարակութեանը որուն պիտի ընծայէր զայն, ուրիշ կարևոր աշխատասիրութիւններ հետզհետէ 'ի լոյս ընծայեցին. որոնք իրաւամբ իրենց վրայ հրաւիրեցին ապագրութեան ուշադրութիւնը և քաջալերութիւնը։ Հասարակաց օգտակար այս աշխատասիրութիւններն են Քերականութիւն մը, Ուրուցաբարութիւնք և Խօսակցութեան Ուղղագրդներ՝ մահմետական Արևելքին երեք ընտիր լեզուաց։

Մեզ չվերաբերիր մօսիւ Մալուֆին այս նոր գործոյն գովութիւնը ընել. այլ աւելի ձեռնհաս գտաւորները և երևելի գիտնականները որոնք այնչափ արդարութեամբ և այնչափ պատուով դաղղիերէնէ 'ի Թուրքերէն բառգրքին արժանիքը յայտնեցին, պէտք է որ զրուցեն, թէ արդեօք հեղինակը կարող եղա՞ւ իւր աշխատասիրութեան երկրորդ մասը առաջինին վսեմութեանը հասցնել և ապահովցնել իւր բոլոր գործոյն այն աստիճանը՝ որուն արժանի է 'ի մէջ բազմաթիւ հրատարակութեանց որ սահմանեալ են ընդհանրացնել գաղղիերէն լեզուին ուսումը Արևելքի մէջ և արևելեան լեզուաց ուսումը 'ի Գաղղիա և բոլոր Եւրոպիոյ մէջ։

Յիշեալ վկայութեաց մէջէն արժան կըհամարիմք յառաջ բերել մէկը՝ որուն վերայ մօսիւ Մալուֆ կրնայ իրաւամբ պարծիլ. այս վկայութիւնն է մօսիւ Պիանքիինը(1), որ Գաղղիոյ և կրնամք ըսել Եւրոպիոյ, (որովհետև մօսիւ ազ Համմեր առ Աստուած փոխեցաւ) արևելագէտ (orientaliste) անձանց ծերագոյնն է. և առաջիններէն մէկը եղաւ 'ի յայտնել մօսիւ Մալուֆին գրեանց արժանաւորութիւնը և օգտակարութիւնը. և այս յայտարարութիւնը այնպիսի յօժարամիտ փութով մի ըրաւ, որ պատիւ կընէ իւր աշխարհ ընտաւորութեանը և միանդամայն իւր տաղանդոյն։ Յայտնի է որ նոյնինքն մօսիւ Պիանքի երկու բառգիրք շարադրած է, մէկը՝ Թուրքերէնէ 'ի գաղղիերէն և միւսը՝ 'ի գաղղիերէնէ 'ի Թուրքերէն. որոնք աւելի մեծ և աւելի բազմածախ են։ Այս բառարանները 'ի յարգի են և անոնց վկայութիւնը բոլոր Եւրոպայի մէջ վաւերական համարուած է։ Մօսիւ Մալուֆ, ինչպէս որ արդէն ըսած եմք և արժան կըհամարիմք կրկնելու, թէպէտև իւր հոչակաւոր նախորդին բառգիրքներէն օգուտ քաղեց, սակայն անոր ընթացքէն տարբեր դրութեան մի հետևեցաւ, և չկրնալով լաւագոյն ընել բաւական համարեցաւ ուրիշ ձևով ընել։

Բայց ի՞նչ միտք ունեցաւ այսպէս ընելու, ի՞նչ դիտաւորութեան և ի՞նչ գաղտնարի հետևեցաւ, հարկաւորութիւն չունիմք զրուցելու. քանզի անցեալը կըպատասխանէ վասն ներկային։ Թուրքերէնէ 'ի գաղղիերէն բառգիրքը՝ Ճիշտ շարունակութիւնն և հարկաւոր հետևութիւնն է գաղղիերէնէ 'ի Թուրքերէն բառարանին։ Միևնոյն կաղապարի վերայ և միևնոյն մեծութեամբ շինուած, միևնոյն տառերով ապուած և միևնոյն հրատարակչաց փութաջան և մտայի խնամոյը յանձնուած, Թուրքերէնէ 'ի գաղղիերէն բառգիրքը՝ տարտղնոյս չունիմք թէ միևնոյն յաջողութիւնը պիտի ունենայ, որով պակուեցաւ գաղղիերէնէ 'ի Թուրքերէն բառգիրքը։

Փարիզ, 15 Օգոստոս 1862։

Ա. ԻՒՊԻՍԻՆԻ

ԱՅԴԱՑԻՆ,

Իզմիրի ազգային քաղաքական ժողովը ամէն երեքշաբթի օր ֆանոնաւորապէս կըդումարուի և բարեխնամ ջանիւք հոգ կըտանի 'ի կարգադրութիւն ազգային ամէն տեսակ գործոց։

Այս երեքշաբթի օրը յիշեալ ժողովոյն Ցերորդ նիստն էր որ տեղի ունեցաւ, որուն մէջ Ուսումնական խորհրդոյն անդամները սահմանադրապէս ընտրուեցան. որոնք հետևեալ յարգոյ և ուսումնական անձինքն են։

Պարոնայք,

Յարութիւն Քէօլէեան,
Կարապետ Յակոբեան,
Ստեփան Տիրացուեան,
Մանուկ Խաչիկեան։

Կոստանդնուպօլսոյ Բ–ոլիէ Դ'Օրիան լրագիրը իւր թուոյն մէջ որ 'ի 7 Մարտի ըստ նոր տումարի, հետևեալ լուրը կըհրատարակէ.

«Ազատասիրութիւնն մեզ, թէպէտև բանը անհաւատալի կերևի, թէ Հայոց ազգային ժողովը խնդրած է Բարձրագոյն Դռնէն, որ խափանէ Մեղու լրագրին հրատա-

---

(1) Մօսիւ Պիանքի 1854 Դեկտեմբերի 26ին կըգրէր մօսիւ Մալուֆին ... Ձեմ գիտեր թէ Նախախնամութիւնը շնորհած է ինձ, իմ ալեւոր հասակիս մէջ, յաջողութեամբ յառաջ տանել զործիս սկսած եմ եւ կըշարունակեմ յարատեւութեամբ. բայց գիարդ եւ իցէ, Արեւելքի մէջ միմիայն արեւելագէտն էք դուք. որուն օգտակար եւ բազմաբիւ հրատարակութիւնները մեծապէս պիտի օգնեն արաբերէն, բուրքերէն եւ պարսկերէն լեզուաց ուսման յառաջադիմութեանը։

վարժապետն 'ի Զմուրայոյ այր, (սա կիրսիւ Իվիք չնորհապարտ Աւագերիցուն, սակս շահասիրելոյ գնա կարեւորաւ թէ 'ի Զմուրայ և թէ 'ի տեղիս) յետ երկիցս այցելութեան, յաւուր մի-ամ առանձին կոչէ զնա յիկեղեցին, ուր հանեալ զոր ինակ կանխագրեալ գրոյն տէր Մարտիրոսի առ Աստուածն, յանձնէ նմա երդմամբ 'ի շհանել զանուն իւր ցորչափ կենդանի է ինքն(17). զի ասէ ոչ դիտէ, 'ի վերադարձն իմ անդ 'ի Զմուրայ, զինչ չարիք ծնուցեն վասն իմ. որով յաստուշիրթեալ Աւագերիցուն ընդ անանունելի գործ նորին, որպէս յանուրջս խորհուրդեալ որ յաչիս ծովու, չմարթանայ խմանալ թէ երևոյթի է զոր տեսանէ, թէ խորհիւն արդեօք. և սոյն գրութիւն անցայտ պահէ, մինչ տարաբաղդասէս յետ վարու կանխեալ օրհասին, մեռանի նոյնինքն Թ. Մանուկն 'ի Կալկաթա։

Դատ ինչ տարբեր ընդ ժամանակաւն, դիպուածով իմիք յանձն լինի Աւագերիցուն, անդստին գրութիւն մի 'ի նորին տէր Մարտիրոսէ 'ի Բթուսից առ անհատ ոմն 'ի Կալկաթա, զի տիեզերիմ Թշնամանօք ներկայ նորին Աւագերիցուն. որոյ գրութիւնն երկար յոյժ, միայն հանմատանք առտ դյուռուած մի վասն ապացուցութեան։

«Տխուր եմ որ ինչպէս տարի գրան (ապրիլն Աւագերիցուն) լու չմնաչիցի, կամ զուցէ յառաջ լու, այժմ ապրպես զինուորեալ ընդդէմ եկեղեցւոյ. միայն գիտէ Աստուած, որ ինչպէս ճանաչիցի, այնպէս պատմեցի և հաւատացի. և այժմ ես իմ անձնականիս համար ունիմ մեղմութիւն ընդ նմա և բայ 'ի շնորհակալութեանց ոչինչ չունիմ ասելոյ. այլ 'ի մէջ պաշտամանց հաստատեալ ճանաչեմ զքա այր խոտվարար և նենգաւոր և հաղթեանաւոր, ցանկացող ինքն օր մի յառաջ տեսանել զկերծանուն Զուրայու, Աթոռոյն և ամենեցուն միաբանացն. բայց ես ասեմ քեզ, Ստեփանոս, իբրև մարդարէաբար, զի կերծանումն զորա լինի հուպ և կարի քառասնեղի ետաչն»։

Պատճառն Յարութիւն հեղինակն և աներարդին, մինչ գրէ թէ «տէր Մարտիրոս գնալով 'ի Կալկաթա երևեցաւ յաչս նորին զուգապատիւ իւր, տեսութիւնն աչաց ասուել զօրացոյց զանկեալոյթն իւր զգայմունս. վասնորոյ ցրուացաւ սէր բարեկամութեան նորա որ յառաջն կայր ընդ մէջ նոցին։ Տէր Մարտիրոս դարձաւ 'ի Զուրայ յետ քան զպաշտօնակիցն իւր գերադասութեամբ կատարելոյ զդործ նուիրակութեանն 'ի Զուրայ 'ի մէջ սակաւաթիւ և լի բարեպաշտ ժողովրդեան։ Աւագ քահանայն Կալկաթու յամին 1857 սկիզբն արար զլրելոյ զդժուարութեան խնձորն ասելն»։

Մարդասիրաբար աղաչի, որպէս քրիստոնեայ դատել թէ զկնի այնչափ սոսկալի պարզ և յայտնի թշնամանաց վեսայնն՝ ընդդէմ մեզմ պատուով և սիրով գնացեալ Աւագերիցուն ընդ նա, ո՞ր էր խնձորն գժտութեան և ո՞վ գլորիչ նորա, և թէ ուստի՞ ծագումն ցրուութեան սիրոյ և թէ ո՞վ անդդամ նախանձաւոր 'ի զուգապատուութիւն ընկերին. նաև թէ ո՞ր նշան նախանձու Աւագերիցուն։ Այո՛ զիտեմ, զի որչափ ծանօթ անցիցս, ունի անդստին և 'ի շնորհակ քեռն անդոսնել տակաւին գիրաւունս մեր բանիս, և համբուրել 'ի ներքուստ շրթամբք խղճի և սրտի. սակայն որպէս գիտէ, թո՛ղ ես մտարերցի զձայն Աստուածային. վայ որ զլրան խաւար կոչիցէ և զխաւարն լոյս։

Արդարև Աւագերիցն՝ զկնի ընչասէր լինելոյ անօրէնութեան ընկերին, յամին 1859 Ապրիլ 8 գրեալ բազմաթերթ գրութիւն մի առ տէր Մարտիրոս ընկերն (թէ

(։ վեոզիոցդամոշ)

։ Հ՝ Հոգրատ դրանդզդրու գնգմն ժրոգբիսամ Հոանամ ղ Հգոտ ժօղատրջնոմ նհոմ · հնամոմ Հղմն ղ Հգո Հօոմ վգրս Հվմն ղ ռանգ մս Ֆ,ս · ,սհ · ռատանգռ Հգռահմտ փիշն գոժ մնգռ գօ մնգնվգվհ ոդմգբ · մմնգկ գՀվմն վ ղ Հգվ գղարկտ հբկ մնգնվգվ ոդ գնեգմամ · գչտ,բմանե գոժ Հգռատա Հգոտ ռանեգամոմ վ տա · գվկոտգվկգ ռանեգ ղ գոմզմն Հոգջզտտ գվգժգվ գզվ,բ,ադմ ոգնոմս վն · գվջտ՝ տտոտ տոտ հվգտտ մանե մնգ Տ դմռեմ՝Ա ։ գվ,բ,տ ջմանե ՞մգ նվկռանե ռանգտ գվկռամ՝Ն ։ գվ,բ,տ ,գնօ՝Հ գռատանՓ ։ գվկ ՞տոտոտ գոժ Հգռատա գժգնվ գվ,բ,ամ գ ոգնոմս գ Հգոտատոտ Հգոտ ռանեգամոմ վ տտ ։

ԹԻՒ 683

Երես	Էջ	տող	սխալ՝	ուղիղ՝
1	2	3	վասն օրինակիւ ,	վասն օրինակի
»	2	30	պարտու ,	պարսաւ
»	3	25	յետակալ՝	յետս կալ
2	1	26	մատակարարելոյ ,	մատակարարելոյ
»	2	3	զրկելոյ կոչմանն,	զրկելոյ կողմանն
»	2	7	արդարութեանցն,	արդարադոյն
»	2	30	զի բովանդակ ,	լի բովանդակ
»	3	6	հաղորդակցիլ՝	հաղորդակցել
»	3	18	երևիլ	երևել
3	1	11	մեծագսրծի	մեծարգի
»	1	15	առաքինական	առաքինակրօն
»	3	11	նուազագոյն	որ նուազագոյն

ԹԻՒ 685

1	2	29	շռայլութիւնդ ,	շռայլութիւն
»	3	8	զգրութիւն ,	զժրութիւն
2	3	9	'ի ծանօթիւն ,	'ի ծանօթումն
3	1	3	քանզի ,	քանի՛
»	1	31	վիճակին ,	վիճակ իմն
»	2	23	'ի կոչման նոցա ,	'ի կողման նոցա •
»	2	10	ցուցակուէ եթէ՝ ոչ ,	ցուցակուէ։ Եթէ ոչ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ • 6 ՄԱՐՏ

Եգիպտոսի ընդհանուր կառավարիչ բարձրապատիւ Իսմայիլ փաշան՝ իւր վերջին հրաժարական ամենախոնարհ յարգանքը օղոստափառ Սուլթանին անձամբ մատուցանելէ ետև. և զկնի հատուցանելոյ իւր փոխադարձ այցելութիւնը կառավարութեան դլխաւոր պաշտօնատարաց և մայրաքաղաքիս դեսպանաց, անցեալ ամսոյ 18ին երկուշաբթի երեկոյին Տիէրիէ Ճէհաթ շողենաւով Աղէքսանդրիա դնաց •

Յիշեալ եգիպտական շողենաւը՝ զոր 'Ն• Բարձրութիւնը օղոստափառ կայսեր ընծայած է, զկնի փոխադրելոյ զփոխարքային Աղէքսանդրիա, պիտի վերադառնայ 'ի մայրաքաղաքս •

Կայսերական հրովարտակաւ հետևեալ փոփոխութիւնները 'ի դործ դրուեցան •

Այժմս նահանդին ընդհանուր կառավարիչ Գայսերլի Ահմէտ փաշան՝ Իզմիրի ընդհանուր կառավարիչ կարդեցաւ փոխանակ Մէհէմմէտ–Բաշիա փաշային, որուն Սվազի կառավարութիւնը յանձնուեցաւ։

Բասուլի էֆէնտին, որ կայսերական դործակալէ Աստրեայ մէջ, Այժմայի կառավարիչ անուանեցաւ •

Երուսաղէմի կառավարիչ Սիւրէյա փաշան Հալէպի կառավարիչ անուանեցաւ և Երուսաղէմի կառավարութիւնը Խուրշիտ էֆէնտիին յանձնուեցաւ, որ Աստրեայ մէջ եղած յանձնաժողովոյն անդամ է •

Իզմիրի վալէմի կառավարիչ Օսման փաշան՝ օսմանեան Արշիպեղագոսին կառավարիչ կարդեցաւ •

Էրքունի եկամտից արձանագրող Հալէթ–Պէյը՝ Կիպրոսի կառավարիչ անուանեցաւ •

Սինոբի կառավարիչ Մաշուք փաշան՝ Իզմիտի կառավարիչ կարդեցաւ •

Լոնտոնի օսմանեան դեսպանատան նախորդ առաջին խորհրդոյ քարտուղար Ալէքս–Պէյը (Վոկորիտէս) օսմանեան հեռադրական դծից վերատեսուչ կարդեցաւ փոխանակ Տիւզեանց Տիրան–Պէյին •

Բէմղի էֆէնտին, որ վաճառականութեան պաշտօնատան դլխաւոր դործակալներէն մէկն է, Բարձրագոյն Դրան Թեմթիլ էֆէնտի կարդեցաւ փոխանակ Մուղուրիս Բավլաքի էֆէնտիին •

Վաճառականութեան և երկրագործութեան պաշտօնեայ վսեմափայլ Լդէմ փաշան՝ միանդամայն հասարակաց կրթութեան պաշտօնեայ կարդեցաւ և վերատեսուչ կայսերական տպարատան •

—Կըհաստատեն թէ օղոստափառ Սուլթանը՝ Պայրամի տօնախմբութենէն քանի մի օր ետքը Ճամբայ պիտի ելլէ Եգիպտոս երթալու. ուսկից այցելութի պիտի ընէ նաև Իտոս և Կիպրոս կղզեաց և Աստրեաց ծովեզերեայ քաղաքաց • Ի վերադարձին 'Ն• Վեհափառութիւնը Կիրիա ևս պիտի երթայ •

—Փարիզի օսմանեան դեսպան Մէհէմմէտ–Ճէմիլ փաշան մօտերս կըսպասուի 'ի Կոստանդնուպոլիս •

—Ընդեալ ամսոյ 26ին երեքշաբթի օրը, մայրաքաղաքիս Անդղիոյ դեսպանատունը և անդղիացի բնակիչները փառաւորապէս տօնախմբեցին դամուսնութիւնը բարձրապատիւ թագաժառանգ Կալլէսի իշխանին ընդ Ալէքսանդրա իշխանուհւոյն, որ Տանիմարքայի թագաւորին դուստրն է • Տոլմա–Պաքճէի կայսերական պալատին առջև երկաթի վրայ եղած օսմանեան պատերազմական նաւը, որ նոյն օրը առաւօտէն զանազան դրօշակներով զարդարուած էր, 21 թնդանօթ արձակելով ողջունեց անդղիական դրօշակը զոր բարձրացուցած էր իւր կեսմին վերայ։ Կաւահանդիստը դտնուած անդղիացի, դաղղիացի և Ռուս պատերազմական շողենաւերն ևս դրօշակներով զարդարուած էին 'ի պատիւ տօնախմբութեանս •

Օղոստափառ Սուլթանը և Բարձրագոյն Դուռը պաշտօնատարներ յուղարկեցին Մեծին Բրիտանիոյ դեսպանատունը և իրենց խնդակցութիւնը յայտնեցին վսեմափայլ սըր Հէնրի Պիւլվէրին 'ի շնորհաւորութիւն այս վեհապետական ամուսնութեան • Նրբեկոյին Մեծին Բրիտանիոյ երեսփոխանը խիստ փառաւոր հացկերոյթ և պարահանդէս մի ըրաւ, ուր ներկայ էին Բարձրագոյն Դրան դլխաւոր պաշտօնատարները և մայրաքաղաքիս բոլոր դեսպանները՝ իրենց առաջին խորհրդոյ քարտուղարներովը և առաջին թարգմաններովը •

Անդղիոյ պալատը սքանչելի կերպիւ լուսաւորեալ էր և անոր մուտքը մեծածախ փառաւորութեամբ զարդարեալ։ Սըր Հէնրի Պիւլվէր և Լէտի Պիւլվէր(1) իւր ընկերցը՝ իրենց սովորական մարդասիրութիւնը պատուասիրեցին զլոյսը հանդիսականները։

—Հանդուցեալ Թաստրաքի Պալդանցի երեսելի Յոյն սեղանաւորին հայրի կինը, որ անդղիացի է, պակուեցաւ 'ի Լոնտոն վսեմափայլ միստր Ալիսոնին հետ, որ Մեծին Բրիտանիոյ դեսպան է 'ի Թէհրան • Յիշեալ նորապսակ ընկերցները մօտերս կըսպասուին 'ի Կոստանդնուպոլիս •

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՔԵՐ

Զմիւռնիա, 9 Մարտի

Փետրուարի վերջին օրը բարբարոսական սաստիկ հալածանք մի եղաւ քաղաքիս հրէից դէմ 'ի կողմանէ Յունայ ցած ժողովրդեան։ Յայտնի է որ ամեն տարի բաղարջակերայ տօնախմբութեան ժամանակը, անհիմն սրբաստանութիւններ կըլլան Հրէից դէմ թէ քրիստոնեայ տղայ մի բռներ են, չարչարեր են, արիւնը խմեր են ևայլն։ Այս տարի ևս պատճառանք չպակսեցան այսպիսի դրպարտութիւն մի ընելու Հրէից դէմ, և այս ձայնը քաղաքիս մէջ տարածուելով՝ Յոյն ժողովրդեան սիրտերը վայ բերին բոլոր Հրէից դէմ։ որոնք ղժբաղդութեամբ Յունայ թաղերը կըդանուէին կամ այն սիրտ տեղատանք կանդնէին ուր Յոյները բազմաթիւ են։ Նոյն օրը խեղճ հրեաները 2—3 ժամու չափ չարաչար դանակոծուեցան, ողորմելի կերպիւ քարկոծուեցան, վիրաւորուեցան, կոլոլուեցան և ուրիշ սաստիկ հալածանք կրեցին։ Բարեբաղդութեամբ քաղաքիս ոստիկանութիւնը շուշացաւ այս ապօրինաւոր չարեայ առաջը առնելու։ Բաւական զօրքով հասնելով և յանցաւորները ու յանցանաց մասնակից ըլլոցները 'ի բանտ յուղարկելով, բարեկարգութիւնը և ապահովութիւնը շուտով նորոգեց։ Կըսեն թէ բանտարկելոց թիւը 30 հոգիի չափ է։

—Ուտելեաց գնահատութեանը համար հաստատեալ խառն Յանձնաժողովը վերջապէս որոշեց զգինը կովու միսին. որ՝ զկնի 15 աւուրց, պիտի սկսի վաճառուիլ 3 ղուռուշ 30 փարայի օխան մինչև յ1 Սեպտեմբերի, և Սեպտեմբերի 1էն մինչև յվերջ Փետրուարի, 4 ղուռուշ 10 փարայի, լիրան 100 ղուռուշի հաշուելով։

—Այսօր մահմէտականները Պայրամի տօնախմբութիւնը սկսան կատարելու սովորական հանդիսիւ •

—Վսեմափայլ Գայսէրլի Ահմէտ փաշան, ինչպէս որ լրագրոյս Կոստանդնուպոլսոյ յօդուածոյն մէջ նշանակուած է, Իզմիրի ընդհանուր կառավարիչ անուանեցաւ։ Այս լուրը մեծ սիրով և ուրախութեամբ ընդունուեցաւ քաղաքիս բոլոր հասարակութենէ, որ յիշեալ փաշային մէկ երկու ամսուան դործունեայ և խոհեմ կառավարութիւնը չէ մոռցած •

—Անցեալ ամսոյ 26էն երեքշաբթի օրը, Մեծին Բրիտանիոյ թագաժառանգ Կալլէսի իշխանին ամուսնութիւնը կատարեցաւ 'ի Լոնտոն ընդ իշխանուհւոյն Տանիմարքայի։ Ի պատիւ այս վեհապետական ամուսնութեանը, Անդղիոյ հիւպատոսարանը և քաղաքիս Անդղիացիները յատուկ տօնախմբութիւն ըրին նոյն օրը և բոլոր հիւպատոսարանները իրենց դրօշակը բացեր էին։

—Կըլսեմք թէ աւաղակաց դունդ մի երևան ելեր է Պուճայի և Սէյտիլէօյի շրջակաները. որոնք պիտի չուշանան անշուշտ իրենց ներկայութիւնը յայտնել զանազան չարագործութիւններով, եթէ հարկաւոր միջոցները շուտով 'ի դործ չդրուին զանոնք բռնելու կամ հալածելու համար •

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԴԵՂՄԸ

Սպեղանի Թովմայի Հոլօուէյ։

Կրսեն թէ մարդկային մտաց ամեն արտադրութիւնները ժամանակ մը աւելէ ետև, նոր գիւտեր անոնց տեղը կը բռնեն • Բայց այս խօսքը այս դեղին չվերաբերիր. վասնզի օրուան մը համար չէ այլ մշտաւև է անոր ներդործութիւնը • ըստորոգմ տրեան մէջ եղած հիւանդութեանց արմատները կըմնջէ և բժշկութեան արհեստն ալ անկէց աւելի բան մը չկրնար ձեռք բերել • Այս սպեղանին մոյն և մարմնոյն մանրաթելերուն մէջէն անցնելով, ինչպէս որ ջուրը ծակոտից բանի մը կանցնի, կերթայ կըպանէ խոյլ պարանոցի, օձիկ, ուռոյցք և քաղցկեղ ըսուած անբուրուն արմատը, նմանապէս դէշ վիրաց և պալարներու մնացորդաց որ արեան շրջաբերութիւնը կաւրեն, և անոնց ապականութիւնը անհետ կընէն •

Ցաւ սրունից •

Հոլօուէյի սպեղանին ամեն դէպքերու մէջ կըբժշկէ սրունից (պալարը) ցաւերը թէև քսան տարուան ըլլայ • Որչափ կարծր գունաթափ և ուռեցած ըլլայ մարմինը, այս ալ չկրնար դիմանալ, եթէ յիշեալ սպեղանին օրը երկու անգամ առատապէս դրուի ցաւած տեղը և ալեկ մը չփուի • Յետոյ նոյն սպեղանիէն լաթի մը վրայ շատկեկ քսելով ցաւած տեղը ծածկելու է • Այս կերպիւ եթէ շարունակ հոգ տարուի, վատառողջ հիւթերը դուրս կելլեն • Վերքերը քիչ ժամանակուան մէջ յարմարոց անտի կըբժշկուին և սրունից միւս մասները իրենց բնական երևոյթը դարձեալ կըստանան •

Հին վէրք, խոց և քաղցկեղ •

Խոյլ պարանոցի, և ուրիշ խոցերը, որչափ և հնացեալ ըլլան, շուտով կըբժշկուին Հոլօուէյի սպեղանին և դեղահատերը դործածելով • Այս դեղին ներդործութիւնը պալարաց և շարաւալից քաղցեղաց վրայ դրեթէ հրաշալի է • քանի առջի բերանը անոնց վրայէն կըհանէ զթոյնը որ զխոցը կըբանեցընէ միշտ • և հետևաբար կըբժշկէ զանոնք •

Կծկումն ջլաց և կարծրութիւն 'ի յօդաւորութիւնս (օյնաք ելերի) •

Այս սխտերն ևս շուտով կըբժշկուին Հոլօուէյի սպեղանիով. որ իւր ներդործութեամբը երևելի հանդիսացաւ նաև անդամալուծութեան շատ դէպքերու մէջ •

Տեռատեսութիւն •

Այս սպեղանին տեռատեսութեան (մայասըլ) ամենէն տանդաւոր դէպքերը կըբժշկէ • եթէ գործածեն զայն՝ ինչպէս որ պատուիրեալ է ծանուցագրոյն մէջ •

Մորթային հիւանդութիւնք •

Խաղաւարտները (գապարձիգ) • չոր արտաքս յարձակումները և մարդայս մարմնոյն ամեն գրգռութիւնները անարև տիր կըլլան քանի մը անգամ այս սպեղանին քսելով • Դուրս տալը սովորաբար արտաշնչութեան պակութենէն կըպատճառուի • և ըստորոգմ այս սպեղանին ներս մտնելով կըբանայ անմիջապէս մարմնոյն ծակոտիկը և կըցրուէ զբորբոքումը՝ ասա կերպիւ հիւանդութիւնը անհետ կըլլայ • Այն տիկինները, որոց երեսը և բազուկները ագեղացեալ են մարթային հիւանդութիւններով, կրնան ասանմանուցիչ զրաւոր դեղը դործածելով • շուտով անհետ ընել նոյն տգեղութիւնները և դարձեալ ձեռք բերել մարթոյն բնական դոյնը և կակղութիւնը •

Այս սպեղանին յատկապէս օգտակար է հետևեալ ախտից։

Ուռոյցք • Քաղցկեղ (չերբենչէ) • Կտրուածք • Գելումն կամ կծկումն մկանաց կամ ջլաց (սինիր չէքիլմէսի) • Կոշտոտից (նասրը • Խօթութիւնք մորթոյ • Յօդացաւութիւն • Խաղաւարտ (չպան) • Ջրդողութիւն (սրսգա) • Նեղաբերան և լայնասոր վերք (փիսթիւլ) • Ոտնացաւութիւն (նիգրիս) • Սերմնականութիւն (պէլ սօվուքլուղու) • Քոս • Լեռդի հիւանդութիւնք • Խոյլ պարանոցի • Ցաւ պարանոցի • Ասիսպիտեան ախտ • Դողդոջին (թիք տուլուբէս) •

Այս սպեղանին, որ կըշինուի նոյն իսկ հնարողին անձնական վերակացութեամբը՝ անոր ընդհանուր դործարանաց մէջ, կըծախուի 'ի Լոնտոն Սիրէնս կոչուած թաղը թիւ 244 • և 'ի Նոր Եորկ Մայնէն Լէն թաղը թիւ 80 • Իսկ ուրիշ երը կիրները, իւր դործակալաց քով կըդտնուին • որոց անունները հետևեալներն են • Իզմիր՝ Իքար Ֆրէր • Կ • Պոլիս՝ Ա Սլթամբա և Ֆ • Տէլասուտա • Աղէքսանդրիա՝ Ֆ • Բէրբինի Խամպիլայ Կլուրտի • Քիոս կղզին՝ Ճ• Սթիէրովիչ, Մալթա •

Յիշեալ սպեղանիին տուփերը զանազան մեծութեամբ են և կըվաճառին 9, 22, 33, 88, 176 և 264 ղուռուշի իւրաքանչիւրը, և ամեն մէկուն մէջ հայերէն լեզուաւ ծանուցագիր մը կայ, որ այս սպեղանիին դործածութեան վրայօք մանրամասն տեղեկութիւններ կուտայ •

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գ.–Յ. Գ. Պալտաճեան •

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ

---

(1) Լէտի Պիւլվէր, որ Փարիզի Անգղիոյ դեսպան լորտ Ռովլիին քոյրն է եւ ազգական Վուէլինկրընի դքսին, իւր ամուսնաւոր՝ ինչպէս նաեւ իւր մարդասէր եւ քաղցր բնաւորութեամբը կըվերաբերի Անգղիոյ ազնուապետական ամենաբարձր կարգին •